ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N_____ "_____" _____ 2018 թ.

«Քլևեր Փրոդաքշն»-ի տնօրեն
տկն ԼԱՈՒՐԱ ՔԼԵԵՐԻՆ
lc@cleverproduction.de
«Ժելֆիլմ» ընկերության տնօրեն
պրն ՎԱՍԻԼԻ ՇԱՐԿԵՎԻՉԻՆ
jelfilm@mail.bg

Հարգելի Լաուրա Քլևեր և Վասիլի Շարկևիչ

Սույն նամակով ցանկանում ենք տեղեկացնել, որ 2018 թ-ի նոյեմբերի 29-ին ՀՀ Նախագահին և Վարչապետին ուղղված Ձեր նամակները վերահասցեագրվել են ՀՀ մշակույթի նախարարություն՝ խնդրին մասնագիտական ընթացք տալու համար:

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք, որ ՀՀ մշակույթի նախարարությունը ողջունում է հայկական կինոընկերության հետ համատեղ ֆիլմարտադրության Ձեր նախաձեռնությունը և կիսում է Ձեր մտահոգությունը՝ «Տատիկիս վարսերը» կինոնախագծի շուրջ ծավալված խնդիրների առնչությամբ:

Բանն այն է, որ «Տատիկիս վարսերը» կինոնախագծի հավելյալ ֆինանսավորման հայտը 2018թ. կինոնախագծերն ուսումնասիրող հանձնաժողովի կողմից մերժվել է՝ հիմք ընդունելով՝ ս.թ. մարտի 17-ին նախարարական հրամանով հաստատված «Ֆիլմի նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման» կանոնակարգի 15-րդ կետը, ըստ որի նախկինում պետական աջակցություն ստացած և «Հայաստանի ազգային կինոկենտրոն»-ի հանդեպ չկատարած պայմանագրային պարտավորություններ ունեցող ֆիլմարտադրող կազմակերպությունների կողմից ներկայացված նախագծերի հայտերը ենթակա են մերժման: 2010-2014թթ. «Պարալլելս Պրոդաքշընն» ընկերությունը ստացել է 93.400.000 ՀՀ դրամ (մոտ 180.000 €) պետական աջակցություն մեկ այլ կինոնախագծի համար, որը մինչ օրս չի ավարտվել և չի հանձնվել պետությանը:

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,

2018թ. աշնանը ՀՀ դատախազությունը քննության է վերցրել այս ֆիլմի արտադրությանը վերաբերող նյութերը՝ պետական միջոցների բաշխման արդյունավետությունը պարզաբանելու համար:

Ներկայումս իրավաբանների կողմից քննարկվում է նաև վերոհիշյալ կանոնակարգի 15-րդ կետի՝ հետադարձ իրավական ուժ ունենալու խնդիրը, սակայն եթե այն նույնիսկ անվավեր ճանաչվի, միևնույն է, «Տատիկիս վարսեր» ֆիլմի՝ պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու հարցն ինքնաբերաբար չի կարող լուծվել, քանի որ ըստ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի և «Պարալլելս Պրոդաքշընն» ընկերության միջև կնքված պայմանագրի՝ «Տատիկիս վարսերը» կինոնախագիծը ֆինանսավորվել է միայն 2016-2017 թվականների համար, որի ավարտին կինոնախագիծը պետք է հանձնված լիներ: Կինոնախագծին տրամադրված աջակցության մտադրությունների նամակի հայերեն տարբերակում նշված է մինչև 30 % ֆինանսավորում, որի արդյունքում, կողմերի համաձայնությամբ կնքվել է ֆիլմարտադրության պայմանագիրը: «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ը կատարել է իր պայմանագրային պարտավորությունները՝ տրամադրելով 23.000.000 ՀՀ դրամ (մոտ 43.000 €) ֆինանսավորում նշված ֆիլմին, սակայն ռեժիսոր Հովհաննես Գալստյանի խնդրանքով երկարացրել է ֆիլմի հանձնման ժամկետը մինչև 2018թ. դեկտեմբերը՝ առանց ֆինանսական լրացուցիչ պարտավորության: 2018 թ-ին Հովհաննես Գալստյանը ներկայացրել է նոր հայտ՝ հավելյալ ֆինանսավորման համար, սակայն հայտի փաթեթում ներառված չի եղել ոչ նախկին պայմանագիրը, ոչ էլ որևէ այլ փաստաթուղթ՝ պետության պարտավորվածության մասին: Ելնելով այս հանգամանքներից՝ կինոնախագծերը ուսումնասիրող հանձնաժողովը մերժել է հայտը:

Ներկայումս «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի և «Պարալլելս Պրոդաքշընն» ընկերության միջև խնդիրը գտնվում է իրավական դաշտում և նախարարությունը չի կարող միջամտել գործընթացին: Կարևորելով միջազգային համագործակցությունը կինոարտադրության ոլորտում, խնդրում ենք, հնարավորության դեպքում, երկարաձգել համարտադրության պայմանավորվածությունները «Պարալլելս Պրոդաքշընն» ընկերության հետ՝ մինչև համապատասխան իրավական գործընթացի ավարտը և վերջնական որոշումը:

Հարգանքով՝ Ն. ՂԱՐԻԲՅԱՆ

Ժամանակակից արվեստի վարչություն
Կատ.՝ Լ. Սարգսյան /☎ 011-51-93-06

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
էլ. փոստ/ Эл. почта/ E-mail: info@mincult.am, www.mincult.am